

գլխեանի, ու չկարենալով զսպել իր զգացումները կը պոռթկայ, կը յուզուի, կը խանդավառուի, ձայն կու տայ, կը հառաչէ միշտ Սարգիսեանի հետ, կոչելով զինքը Մովսիսամեք, հայրեմախոյզ, հայա-կրկիտ, ցանկալի, յոյժ սիրեցեալ, հայկազան...: Սարգիսեան Անիի աւերակները շրջելով՝ ողջոյններ կը շարժէ շ. Ղեկունդին, որ ինքնիրմէ դուրս ելած կը բացազանչէ. «տեսե՞ր, տեսե՞ր ուրեմն այն քո հա-յաքնին աչօքդ զակնն Բաղրատունեան աշխարհի զմեծն Անի. չօչա-փեցե՞ր զարքայակերպ որմունսն, զթագադարդեալ ձեղունսն, զպատ-կառելի պատուարսն, զաստուածաբնակ երբեմն տաճարսն, նստա՞ր ի գետնի զոր վեհադունք կոխեցին արիւնք Դաւթայ, Տիգրանայ եւ Գրիգորի. համբուրեցե՞ր զնշխարս մեծութեան Հայկեան ոգւոյ...: Երանի՛ արտասուախառն աչացդ, ո՛վ եղբայր»²¹¹: Սխալած պիտի չըլլանք՝ եթէ կոչելու ըլլանք Ալիշանը ոչ թէ նախանձախնդիր, այլ նախանձոտ, որ կ'ուզէ սաւառնիլ մինչեւ Հայաստան, Սարգիսեանի հետ ճաշակելու համար հայրենի սրբութիւնները. «ո՛ տայր եւ ինձ թաւալել միանգամ ի հանգստարանի անդ, եւ... շրջեցուցանել ըզ-գլուխ իմ մերթ ի խորենացոյն, մերթ ի վերծանողին եւ մերթ յԱն-յաղթին գերեզմանս», ու կը փափաքի ունենալ իր գլխուն վրայ ա-նոնց գերեզմաններու հողը կամ փոշին՝ իբր. երկնային ցօղ մը որ «զուարթացուցէ զիս»²¹²:

Սարգիսեան յիսնամեայ էր, Ալիշան հազիւ անոր կէսը. երկու-քին հայրենասիրութիւնը հարթած էր տարիքի ամէն խտրութիւն:

* * *

Մենք Սարգիսեանը թողուցինք էջմիածնի ճամբուն վրայ: 1849ի Օգոստոս ամսուն Մուշէն ճամբայ կ'ելլեն հաւաքուած ձեռագիրները դէպի Վենետիկ, ու Սարգիսեան կը պատրաստուի մեկնելու էջմիա-ծին:

Ամիսներ ամբողջ տառապաղին սպասած էր էջմիածին երթալու հրամանին, ու վերջապէս ստացաւ. սակայն զարմանալին այն է՝ որ երեք ամիս ետք զինքը կը գտնենք ոչ թէ էջմիածին, այլ Տրապիզոն, ուրկէ կը գրէ. «Թերեւս զարմանալք ընդ դալուստն իմ այսրէն, յետ այնքան թախանձանօք խնդրելոյ ուղղել զընթացս իմ ի քրդաս-տանէ յարեւելս կոյս. քանզի այն ինչ պատրաստեալ ի Մուշ եւ յուղ-ւոջ լինէի երթալ ուր ցանկայի, ի նմին աւուր կալաւ զիս տենդ սաս-տիկ անդող եւ արկ ի մահիճս, չգիտեմ ուստի պատճառս առեալ, եւ իբրեւ ամիսս երիս չարչարեալ զիս եւ մաշեցուցեալ՝ բազմապա-

211. Ալիշան շ. Ղ. Վենետիկէն, 1 Յունուար 1846ին, առ շ. Ն. Սարգիսեան, Մուշ:

212. Ալիշան շ. Ղ. Վենետիկէն, 28 Փետր. 1847ին, առ շ. Ն. Սարգիսեան, Մուշ:

տիկ դեղորէիւք հազիւ գերծայ ի նմանէ, եւ յետ այնորիկ թէպէտ ի խորհրդի էի տակաւին, սակայն հիւծեալ անձամբ եւ զի ձմեռն սաս-տիկ եհաս ի վերայ, չիշխեցի երթալ անդը, այլ լաւ համարեցայ դալ այսր եւ ձմեռել եւ հաստատիլ յառողջութեան»²¹³:

Նորութիւն չէր Սարգիսեանի համար հիւանդութիւնը, որովհե-տեւ աչք առած էր ամէն ձախորդութիւն. այս երրորդ հիւանդութիւնն էր՝ զոր ուղեւորութեան ընթացքին ունեցած էր, երրորդը եւ ամէ-նէն սոսկալին, որ «իբրեւ ամիսս երիս չարչարեալ զիս եւ մաշեցու-ցեալ»: Հազիւ ապաքինած՝ կը թողու Մուշը եւ «մեծաւ տառապանօք անցեալ ընդ ահազին եւ ընդ ձիւնապատ եւ մրկալից լեռնն Ղու-լաթ՝ ողջամբ հասաք աստ ի Տրապիզոն»²¹⁴: Միթէ պիտի յուսա-հատի՞ մեր ուղեւորը. 1849-1850ի ձմեռը կ'անցնէ Տրապիզոն, յոյ-սով որ «ի դարնան դարձ արարից յէջմիածին»²¹⁵:

Էջմիածին Սարգիսեանի երազներու աշխարհն էր եւ մինչեւ մահ պիտի մնայ երազ մը, առանց կարենալ իրականացած տեսնելու, ո-րովհետեւ տարիները կը սահէին, Պոլսոյ մէջ կը սաստկանար կրօ-նական պայքարը, սկսած էին՝ բորբոքիլ Հասունեան խնդիրները: Միաբանութիւնը պէտք էր իր գոյութիւնն ապահովել, տոկալ դրժ-ուար վայրկեաններու. եւ որովհետեւ Սարգիսեան նկատուած էր հա-սարակութեան սիւներէն մէկը, պէտք էր ինքն ալ բերել իր մասնակ-ցութիւնը եւ ուսերուն վրայ տանիլ ո՛չ թէ միայն ուղեւորութենէ ե-կած նեղութիւնները, որոնք կը քաղցրանային ձեռագիրներու յոյ-սով, այլ հոգեկան տաքնապն ու վիշտը, որ աւելի սպառիչ է եր-բեմն՝ քան նիւթական ցաւը:

1846 թուականին շ. Պետրոս Մինասեան Պոլսոյ մէջ կը կազմա-կերպէր «Համազգեաց» ազգօգուտ ընկերութիւնը, ու տարի մը ետք կ'անցնէր Տրապիզոն, բարձրացնելու համար հիմէն՝ Միւթարեան կ'անցնէր Տրապիզոն, որը օրին դեռ աւելի կը պայծառա-նոր վարժարան մը: Պոլսոյ մէջ՝ օրը օրին դեռ ամէնուն. ու պայքարը նար «Համազգեաց»ը, ինչ որ ախորժելի չէր ամէնուն. ու պայքարը կը յուզուէր ընդդէմ «Համազգեաց»ի եւ անոր ազգանուէր հիմնա-դրին. այնպէս որ 1850ի Դեկտեմբեր ամսուն, դերագոյն իշխանոս-թեան ձեռքով Տրապիզոնէն կը հեռացուէր շ. Պետրոս Մինասեանը: Դեռ չէր ծածկուած նորաչէն վարժարանի տանիքը. Հիւրմիւզեան Աբրահայր դժուարութեան մատնուած՝ չկարենալով փոխանորդ մը ղրկել շ. Պետրոսի, կը ստիպուէր խնդրել Սարգիսեանէն «առ սակաւ

213. Սարգիսեան շ. Ն. Տրապիզոնէն, 13 Դեկտ. 1849ին, առ Աբրահայր Գեորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

214. Սարգիսեան շ. Ն. Տրապիզոնէն, 18 Դեկտ. 1849ին, առ Տէր Տիմոթէոս վրդ. Էրզրում:

215. Սարգիսեան շ. Ն. Տրապիզոնէն, 13 Դեկտ. 1849ին, առ Աբրահայր Գեորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

